

անկարող չ'է սահմանելու այդ փոփոխութիւննենիր : Ապաքէն, այդ կամքը ամեն օր կը գործէ ֆիզիքական կարգի եղելութիւններուն վրայ, և ամենէն զօրեղ եղանակաւ մը, զայնս մեր պիտոյիցը համեմատ փոփոխելու համար, և բնական երկոյթներուն վրայ, մարդկային այդ գործողութիւնը բնաւ երբէք անհամաձայն չ'է բնական օրէնքին զաղափարին հետ, բնդկակառակը անիկայ ասոր հետ սերտի կապատճ է : Եւ հոս տեղն է կրկնելու Մ. էսֆինասի (⁽¹⁾) սա հանճարեղ բացարութիւնը թէ՝ «եթէ մարդկային գործունէութիւնը անհաշտելի է երևոյթներու կարգին հետ, այն ատեն հաւկիթ մը եւ փելը պէտք է հրաշը մը նկատել» :

Անտարակոյս, կան կարգ մը եղելութիւններ՝ որոնց իրենց անհունութեան և կամ հեռաւորութեանը բերմամբը՝ խոյս կու տան մարդկային ո՛ր և է գործողութիւնէ, օրինակի համար աստղաբաշխական կամ երկրաբանական և կամ միջնէն իսկ օդերևութարանական երևոյթները. ատոնց մասին մենք ուրիշ բան չ'ունինք ընելիք եթէ ոչ զայն սկրել լուսութեամբ և մեր հեռաւոտեսութեան մտային զօրութիւնը անկարող է զմեզ զգուշացնելու որպէս զի խոյս տանց գիտաւորի մը ընդհարումէն և կամ երկրաշարժէ մը. և սակայն, ատոր հաւակակ, որցան իրերու մէջ ալ՝ մարդկային զիտութիւնը այսոր կը ամիրէ վեհապետորէն : Անգործարանական վիմիազիտութեան բաղադրածներուն շատերը, և ամենէն կարեւորները, զիտունն է որ ատեղծած է իւր աշխատանոցին մէջ: Երբ կը զիտենց անասնարոյցը գոմին մէջ, պարտիզամշակը պարտէզին մէջ, որոնց անդադար կը փոփոխեն անասնական կամ բուսական ձևերը և կ'ստեղծեն նորանոր ցեղեր, կարծես որ կենդանի բնութիւնը կը թողու որ թիրեն զինքը այնքան հւուրէն՝ որքան անշարժ և անշունչ նիւթը : Մինչ իսկ մինուլորտի երևոյթներն ալ բացարձակապէս չեն կարող խոյս տալ

մարդկային ճարտարութեան իշխանութենէն. ապաքէն մարդկային ճարտարութիւնը, խոպան վայրերը մշակելով և կամ յարմար տեղեր ծառեր տնկելով, ի վեճակի է այսօր փոփոխելու հովերու և ջուրերու գրութիւնը, և երկնքէն՝ ըստ հաճոյս անձրեն և զօղ իջեցնելու : Մեր այս ըստածին կենդանի օրինակ մըն է Եզիպատուը. այսօր, Եզիպատուի կլիման, մանաւանդ Գահիրէի ողը մհծապէս բարեփոխուած է Սուէզի ջրանցքին բացումէն առաջ եկած օդերևութական փոփոխութենէն, որպէս և շնորհիւ Քաղաքապէս մհծապէս բարեփոխուածն և անխոնջ ջանքերուն՝ բուն իսկ բացարձին բոլոր հրապարակները և փողոցները ծառեր տնկելով և զարդարելով:

Ուրիմն, մեր գործունէութիւնը կարող է ես առաւել գործել տնտեսական եղելութիւններուն վրայ, ճիշդ սա պատճառաւ որ անոնց մարդուս եղելութիւններն են և կը գտնուին մեր անմիջական ազդեցութեանը ներքեւ:

Հիմայ տեսնենց թէ ինչպէս կը խորհի բնեկրվարակն դպրոցը :

ՑԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՒԽՁԵԱՆ

Փարիզ

Թ. I. S. U. U. C. Φ. U. Ρ. U. Σ,
ν' ՞ ՞ Կ. Պ. Θ. Α. Σ. Σ. Ζ.

(Առանձայն Որբկամերում)

Ուզեցին և որոշեցին մարդիկ՝ որ պըզինձէ ըլլամ և փոքր արժէք մ'ունենամ. ասիկա ճակատագիրս էր, բայց ես աւելի պատճութիւններ ունիմ քան մհծարժէք ուսկին:

Զիս հրապարակ հանեցին: Աղճամարդանցանցին մը մէկուն զրպանին խորշը նետուած էի, արծաթներու և ոսկիներու քով ամշացած: Օր մը երր տէրս հասուցում մը կ'ընէր՝ վէճ մը, աղմկալից վէճ մը լսեցի: Քիչ մնաց ձեռք մեռի պիտի զային: և ես գողալով լսեցի միւսին սախուրերը «Ճամար փարայ պակաս տուիր, A.R.A.R. @

ხელს ჯამთო დანახუ, მწინავ კაռაվაროւ-
ჭხან აქმან ღიმბემ» ა სამ ჩხო თხელა ალ-
ფიფრად և ამაგასტელი რამა.

— Վաղուան թողունք:

— ԶԵ՛, հիմայ պիտի տաս, կը կրկնե՛մ
սպառնալիքս :

— Զորս զրշ. երեսուն փարա տուր՝
քառորդ մը տամ:

— Զորսուկէս ալ չունիմ. տասնոցս, ապա թէ ոչ՝ մուրհակդ ալ ետ չեմ տար:

Այս զգացի որ տէրս քրտնեցաւ տագնաւ-
պէն և յուսահատած՝ զրպանի ստակները
նորէն ափին մէջ առաւ, մանրազնին ցննեց
և երբ զիս նշմարեց՝ երկու մատներով
վրաս յարձակիլը և ոսկի մը գտնելու չափ
ուրախ ըլլալը մէկ ըրաւ և զիս ուրիշն
տալով մուրհակը առաւ։

Ահ, ո՞րքան ազահ մարդու մը ձեռքը
մացի, զիս տարիներով կզպեց սնտուկին
մէջ, ուր ինձմէշ շատ արժէքաւոր դրամներ
եկան զիս իրենց ներքե թաղելու. ոչ լոյս
կը տեսնէի և ոչ շունչ կ'առնէի. կար-
ծեցի թէ դրամներու գերեզմանն ալ ան
է: Սակայն մի քանի տարի վերջ զգացի
որ վրայիս բեռը կը թէթէնար, դրամնե-
րը դուրս կ'ելլէին. և ես սկսայ լոյս տես-
նել և շունչ առնել: Այդ ատենները հա-
ռաչանքով ինծի կը մօտենար իմ տէրը.
օր մ'ալ երբ արկղը բացաւ՝ բացազան-
չեց, «Հէյ զախ, ինչ էինք, ինչ եղանք.
գէթ դուք ինծի հաւատարիմ պիտի մեաք
սիրելի դրամներս»: Մեր ազահ տէրը սը-
նանկացեր էր: Օր մը՝ եկաւ արկղէն ար-
ծաթ դրամները առնելու, ու զիս ալ միա-
սին առաւ, բանի որ արծաթի նման կը
փայլէի:

Պոլսոյ մէջ էինք. ես հանգիստ նստած էի տիրոջս զրպանը, ճիշտ սրտին երակին կպած և անոր արագ արագ բարախում ները կը համրէի:

Կալաթայի կամուրջէն անցաւ տէրս,
աշշերը միշտ զետին՝ որ չըլլայ թէ աղ-
քատի մը իրեն երկարած ձեռքը տեսնէ և
ողորմութիւն մ' ընելու սխալն ընէ, կամ
գութը ունենայ, բայց տեղ մը հասաւ՝ որ
այ ևս անկարենի եղագ ողորմութիւն մը

չըրած անցնիլ, ստքերը կտրտուած կին
մը, մէկ աշբը կոյր, աղտոտ տղեկ մը
զիրկը առած՝ աջ ձեռքը տիրոջս երկըն-
ցուց. ուրիշ մը նորէն կաղ՝ իր կորտած
ձեռքը կը ցուցնէր, ուրիշ մը երկու աշ-
քերը կոյր՝ խաւարը կը խարխագէր:

— Կը մթնէ՛, ողորմութիւն մը, անօթի եմ, կը կրկնէր հաշմանդամ մայրու:

— Մանրութ չունիմ, ըստ տէրս:
— Եթէ քառասունոց մ'րյայ՝ աւելի՝

շնորհակալ պիտի ըլլամ:

Ծէրս քրտնեցաւ և փորձեց մի զանի
վայրկեան երկու մասներով զրպանը խու-
զարկել, թէ արդիօք հնոն առանց իր գիտ-
նալուն փոքր դրամ մր մտած է:

Եւ ակսաւ մէճիտները, քառորդները, արծաթ զրամները իր քրտնած մատներով շփել ու մէկդի դնել. ևս իմացայ որ ինձի կը սպամէք. և յիրափ երբ իր տար մատներուն վերջ անցայ՝ իսկդյուն լոյս աշխարհ եկայ. և տէրս ինձմէ՛ շատ գոհ և միանգամայն տժգոհ որ զիս կը կորսնցնէ՛ զիս աղքատ կնոջ ափին մէջ զրաւ առանց միւս աղքատներու ակնարկ մրտ տայու:

Նըյն օրը աղքատ կինը ինձմով կշտացուց իր փողքիկ մանկիկներէն մէկը, և ես անկից մէջ զիւզէ զիւզ, բաղաբէ բաղաբ ճամբորգեցի. երբ հարուստներուն կը մօտենայի անոնց՝ ինծի արհամարհանցով կը նայէին, իբր թէ ապրելու իրաւունք ունեցած չըլլայի: Քանիներ ինձմով բարիքներ կ'ընէին ուրիշներու, և բանիներ ինձմով գաւաթ մը աւելի ալզոնէ խմելով կը զինովայիին ... և ոմանք ալ ինձմով մոմեր կ'առնէին զայն վառելու համար ուխտատեղիները՝ իրենց հիւանդ սիրելին նեռուն առաջնութեան համար:

Վերջապէս տարիներ վերջ պառաւ կը-
նոջ մը ձեռք ինկայ, որ զիս իր թաշկի-
նակին ծայրը կապած՝ կիրակի օր մը ե-
կեղեցի գնաց. քահանան «Յիշեալ Միջիր»
մը մջելով՝ բուրուտով ձեռք՝ պառաւին
մօտեցաւ և րարեպաշտ կինը թաշկինակը
զրպանէն Հանեց, դողդպացող մատներով
զիս կապակպող Հանգոյցը քակեց և պէա-
կին մէջ դրաւ մնեց գոհունակութեամբ.

բահանան ինծի նայեցաւ մպիտով մը և թիչ մը խունկի ծուխ տալով պառաւին հեռացաւ:

Բարեկեցիկ ընտանիքի մը հօր զրպանն էի վերջին, իրիկուն մը երեց որդին տասը տարեկան պատանի մը՝ ըստ իր հօր.

— Հայր, եթէ այս օրուան սովորած ոտանաւորս արտասանեմ ի՞նչ պիտի տաս:

— Տասնոց մը զաւակս:

Տղան իր խոստումը կատարեց, ինչպէս և հայրը:

— Գանձանակիդ մէջ պիտի պահես այնպէս չէ:

— Այս՛, հայրիկ:

Եւ տղան զիս առաւ ու գանձանակին մէջ ձգեց, ուր ինծի նման ուրիշներ կային, Հոն օրէ օր կ'աւելնայինք:

Օր մը լսեցի հառաչանք մը, ճանցայ, մեր փուրիկ տէրն էր, և ան կը ճեկեակար և մի քանի արցունքի կաթիլներ ալ մեր գրայ ինկան: Գրպանէն լրազիր մը հանեց և կարդաց. «Ատանայի որրիկը անօթի է և կը մրսի». «Ան, իմ հայրենակիցս է, որ իր հօրը և մօրը սպաննուուիլը տեսած է, և հիմայ անօթի է և կը մրսի. Ինչո՞ւ զուարձութեանս համար պահեմ այս դրամները, արդիօք ասոնցմով կարելի չէ գէթ օր մը աղբատ որրիկ մը ապրեցնել» ... և շարունակեց լալ ու գանձանակը բանալ:

Փոքրիկը համբուրեց զմեզ և ըստ «Գնացէ՛ք հայ որրիկ մը ապրեցնելու» և մենց դէպ ի Ատանա ճամբայ ընկանք: Ես միշտ կեանքիս մէջ կը մտածէի թէ ինչո՞ւ ստեղծուած եմ քանի որ մեծ արժէց մը չունիմ որ կարենամ ո՛ւ և է մէկուն բարիք մ'ընել. «Տասը փարա», արհամարհական շեշտով մը կը կրկնէն միշտ զիս:

Ատանայի մէկ զիւղէն թիչ հեռու զայկացած պատանի մը զուփար բարձին տուած կը քնանար. անօթութիւնը նիհարցուցեր էր զինքը. մէկը՝ որուն յանձնուած էի արթընցուց պատանին և ըստ, «Ելի՞ զաւակս, հայրենակիցներդ քեզի զթացեր են» և զիս անոր ափը զրաւ: Հայ որրիկ մ'էր

ան. որ գունատ դէմքով մպտեցաւ, առաջ զիս, ուրախութիւնէն արտասուց, համը բուրեց, աղօթեց իր բարերարին համար և զիս տուաւ ուրիշի մը, որ փոխազարձ իրեն քանի մը պատառ հաց տուաւ:

Եւ հայ որրիկը ազատեցաւ մահուան ճիրանէն:

Եւ ես երր զգացի թէ մահամերձ որբիկը ապրեցուցի՝ մտածեցի «Ա՞ս է իմ կեանքիս ամենէն նշանաւոր դէպը» և ես ուրախ էի որ ստեղծուած եմ:

Հ. Յ. Պոտուրեամ

Ո.Ր Զ Ա.Գ.Ա.Ն Գ. Տ Ա.Ր Օ Ն Է Ն

ԳԵՐ. ՆԵՐՄԱՍ ԵՊ. ՃՆՏՈՑԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ

Առ Առնապատի Գեր. Տեր Տ.
Խնածախոս Ալբերտ. և Ընդէ-
լլորայ. Գիքասաւիւ Հարավը-
լիբարեան Ալբանի, ի Վանեա:

Վշտալի սրտիւը և գտան հառաչանք-ներով կու գամ Ձեր պատուական սրտե-
րուն տեղեկացնել այնպիսի անակնկալ
լուր մը՝ այնպիսի զոյժ մը որուն նմանը
չէ պատահած մեզ համար, Տարօնոյ երկ-
րի ժաղովրդեան համար:

Հազար իննկարիւր ինն թուականին Յուլիսի 28ին մթութեան սև վարագոյր մը ծածկեց Մշոյ լեռներ, ձորեր, եկեղե-
ցից, զպրոցը և Եպիսկոպոսարանը, ու անազորոյն մահը այդ վարագոյրին ներ-
ցեն երկարցնելով իր գագանարարոյ և յափշտակիչ նիրանները՝ խեց և տարաւ
մեզմ՝ մեր պատուական և ուսումնաս-
փիւն Հովուապետը՝ մեր բազմերախտ և յոշնահանճար Հայրապետը՝ զիրքի Ճնտո-
յեան Հայր մեր Ներսէս Եպիսկոպոսը:

Ազգը կորսնցուց, Հայ-կաթողիկէ Հա-
սարակութիւնը կորսնցուց իր մեծ վարդա-
պետը՝ իր վաստակաւոր Հովուապետը, իր
սիրելի Եպիսկոպոսը:

Արհի. Ճնտոյեան Հայր Ներսէս Եպիս-
կոպոսին ողբարի մահը և վախճանը խիստ
մեծ ցաւ տուաւ Տարօնոյ Հայ ժաղովը: